



### Տաճար Ազգեաւոյ :

ԱՅՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

→  
Միկիլիոյ կղզոյն վրայ :

ՀԻՆ ատենէն՝ ՚ի վեր աշխարհքիս անուանի ու բազմահռչակ կղզիներէն մէկն է Միկիլիան, ձոխ իրեն պատմական աւանդութիւներովն ու երկրին բարերերութեր, որուն համար Շտեմարան Հռովմայ կոչուեցաւ հիներէն. և ինչուան աս օրուան օրս բոլոր Խարոպայի տեսակ տեսակ պտղոց բերքեր կը մնատակարարէ, անոր համար կ'արժէ համառօտ տեղեկութիւն մը տալ վրան :

Միկիլիան Միջերկրական ծովուն ամենէն մեծ կղզին է, Խտալիոյ և Միկրի-

կէի մէջտեղը . Խտալիայէն պզտի նեղուցով մը բաժնուած որ կըսուի Ծնցք Մ'եսախնիոյ, սաստիկ վտանգաւոր ու միրկալից . Կղզւոյն գրափ երևոյթը յունաց Ճ (Փէլց) գրին ձեն ունի, և երեք անկիւնները մէյմէկ հրուանդանով դուրս երկնցած . առաջինը կ'ըսուի Լիբէնն, որ Մ'ֆրիկէ կը նայի, և հիմա Պոքոյ կ'ըսուի . Երկրորդը Պիելորն՝ Խտալիոյ գիմացը որ ՚ի Հունաստան կը նայի, և հիմա Ժարոսի կը կոչուի, և երրորդը Պաքին՝ այն է հիմակուան Բ'ասսաւոյ ըսուածը . Կը պատմեն հին մատենագիրները, ինչպէս Դիոդորոս իր և գրքին մէջ, թէ Միկիլիան ատենով Խտալիոյ թերակղզւոյն հետ միացած էր, և վերջը ծովին ջրերուն սաստիկ շփմուն

քէն և ընթացքէն մաշելով այն պարանոցը , առանձին կղզի եղաւ Աիկիլիան , և այն բաժանման ծովեզը Ռէճճիոյ ըստեցաւ , ուր քիչ ատենէն համանուն քաղաք մը շինուեցաւ . ոմանք ալ կը հաստատեն թէ այս պատառումը սաստիկ երկրաշարժէ մը առաջ եկած ըլլայ : Ի՞այց մենք կը հաւանինք որ երկուքն ալ պատճառ ըլլան այս բաժանմանը . վասն զի հօն թէ ջրին յորձանքը և թէ երկրաշարժները սաստիկ են և անպակաս : — Աիկիլիան զանազան ժամանակ զանազան անուններ ունեցաւ : Իսխ կոչուեցաւ Աղզի արեգական . ետքը Աղզի Աիկիլոպայց , ըստ առասպելաց , իրենց հօն բնակելուն համար , ինչպէս որ Հոմերոս Ոդիւսականին թ . և ժ . երգին մէջ կը յիշէ : Իշտքը ըստեցաւ Տրինակրիա , հօն տեղի եղած երեք սարաւանդներէն առնելով . որովհէտեւ "Աքրա , Ա՛ռա յունարէն Ոարաւանդ կը նշանակէ . ինչպէս որ Ովեդիոս իր արձանագիրներուն Դ . զրքին մէջ կ'ըսէ .

Երկիր 'ի սարսա երփս յանեզը յալիս տարածեալ . Ի դրից տէղոյն եռասար էտո զանուն իւր ըլնիկ :

Իշտատքէոս Հոմերոսի քննիցը և հիներէն ոմանք Աիրիլլայից խօսքէն առնելով կ'ըսէն՝ թէ աս անունս առաջ եկած է Տրինակոս կամ Տինակոս Պլղուտոնի որդւոյն անունէն . և ահա պատգամախոս Աիրիլլային խօսքերը ասոնք են . " Աիկիլիան շինեց Պլղուտոնին որդին Տրինակոս ծովու տէրը „ : Ա երթերը սիկիլիացիք , որ աւելի լատիներէնի ետև ընկան քան թէ յունարէնի , անոր համար կողեցին թրիտոնէնրա (Triquetra) որ եռանկիւն կը նշանակէ :

Ա երթը Աիքանները եկան Ապանիայէն , ինչպէս որ կ'ըսէն Փիլիսոսոս , Անտիգոնոս , և Ծառկիդիդէս , ու կըզին ալ իրենց անունովը Աիքանիա կոչեցին : Ի սոնցմէ ետքը եկան Աիկուղեանք որոնք Խտալիոյ ամենէն զօրաւոր ժողովուրդն էին ու Տիրերիսի կողմերը կը բնակէին , բայց Ամորիգենացիներէն վոնտուելով , ստիպուեցան ծովը անցնելու . և եկան Աիքաններուն յաղթե-

ցին և Աիկիլիոյ տիրեցին , և կղզւոյն առջի անունն ալ փոխեցին Աիկիլիա դրին : Այս բաներս կ'աւանողէն մեզի թնուկիդիդէս և Ղիմնեսիոս Աղիկառնացին : Խակ Աէապօլոյ ալ Աիկիլիա անունը տալը Արկին Աիկիլեայք անուանելով երկուքն ալ մէկ տեղ , վերջի դարերու գործածութենէն մնած է . վասն զի ոչ երբէք կը տեսնանք որ հիներէն յոյն և հռովմայեցի մատենագիր մը Աէապօլոյ ալ Աիկիլիա ըստած ըլլայ , այլ միշտ զատ զատ անուններ տուած են երկուքին ալ . արդէն կղզիին պատմութեանն ալ նայելով կը տեսնանք որ թէ Աիկիլիոյ տիրապետողները և թէ բուն Աիկիլիոյ թագաւորները ինչուան Քրիստոսի 1270 թուականին մինակ Աիկիլիոյ թագաւոր կը կոչուէին : Խակ 1270էն ատենները Աղէմէս Դ պապը Արորուս Անժուի գքախն , որ սուրբ Լուգովիկոս գաղղիացւոց թագաւորին եղբայրն էր , փոխարէն մը ընելու համար , Աէապօլոյ ու Աիկիլիոյ թագաւորութիւնը միով անուամք Աիկիլիա ըստալով իրեն պարգևեց : Իշտ այս ըրած պարգևին պատճառը Արորուսի Լակեղեցւոյ ըրած ծառայութեանները եղան , որ Լակեղեցւոյ իշխանական ստացուածքը ազատեց Անդրատինոսի բռնութենէն որ ինչուան Հռովմ գացեր ու տիրեր էր . բայց Արորուս գաղղիացի զօրքով վրան ելլելով յաղթեց իրեն ու զինքն ալ գերի բռնեց սպաննեց . աս ըրած ծառայութեանը համար եղաւ թագաւոր Աիկիլիոյ ու Աէապօլոյ միանգամայն Լակուց Աիկիլեայց անուամք , ինչպէս որ կը տեսնուի պապին կոնդակէն : Ի՞այց ինքը բնութք զայրաց կոտ ըլլալով , իր ըրած անգթուիններովը ատելի եղաւ Աիկիլիացւոց , և թագաւորութիւնը կորսնուց զայրացւոց . վասն զի Աիկիլիացիք Յովհաննէս անունով իշխանի մը առաջնորդութեամբ ոտք ելան և 1282էն Օ ատկի իրիկունը գաղղիացւոց վրայ վազելով որչափ որ գաղղիացի կար կըզւոյն մէջ զամէնքն ալ թրէ անցուցին . և այս կոտորածն է Երեկոյ սիկլական ըսուածը : Արորուս հազիւ ազատեցաւ

աս կոտորածէն, ու յօւսահատութենէն ինքզինքը սպաննեց կ'ըսեն : Աղեմէսի օրինակին հետեւցան խել մը պապեր երկուքին միատեղ աս նոր անուանակոշութիւնը տալով : Խակ Վրիգորիոս ձև . որ Հովհաննա թագուհւոյն և Փրեդերիկոս Գեն մէջ Աիկիլիա եղած խել մը պատերազմներէն վերջը խաղաղութիւն ըրաւ, և իր հաշտարար կոնդակին մէջ Վափոլիի թագաւորութիւնը Աիկիլիա անուանեց, իսկ Աիկիլիան Տրինակրիա : Ա երջը Ռաֆոնսոս Վարակոնայի թագաւորը գէնքով ու շատ աշխատութեամբ Վափոլիի թագաւորութիւնը առաւ և երկու տէրութեանց ալ թագաւոր եղաւ, և ինքզինքը անուաննեց առանց անուան զանազանութեան նոր և անսովոր անուանակոչութեամբ թագաւոր Երկուց Աիկիլեայց, և ով որ անկէ վերջը ինչուան հիմա այն թագաւորութեան յաջորդեց, միշտ նոյն անունը պահեց :

Աիկիլիոյ երկիրը շատ բարեբեր է, անոր համար հին ատեն Աիւբեղէ աստուածուհւոյն նուիրած էր, 'ի նշան իր հնձոց առատութելը և մշակութեամբ ծաղկած ըլլալուն, որով մերձակայ ազգաց ուսուցիչ և օրինակ եղած էին : Իս կղզիէս կ'ելլեն առատ ցորեն, եղիպատագորեն, գարի, բրինձ, ընդեղէններ, մեղրամոմ, մեղր, տեսակ տեսակ անուշահոտ կիտրոններ և առատ նարնջենիներ . գարձեալ մետաքս, բամբակ, կանեփ, շաքար, սոտա, խէժ, և սքանչելի մաննա : Վալիաւոր մշակուած բաներէն մէկն ալէ ձիթենին, որ շատ լաւ առաջ կու գայ, բայց ափասոս որ ձէթը անոր համեմատ լաւ և առատ չլաւ կերպով չանելնուն համար . նոյն պէս նաև գինին շատ ազնիւ ու առատ է . երկրագործութեարհեստը ու ճարտարուիլը շատ ընկած է, և վաճառականուն ալ օտարներուն ձեռքն է, մանաւանդ անգղիացւոց : Ունի նաև խել մը տեսակ կենդանիներ, ինչպէս ձի, ջորի, որ անուանի են, էշ, գոմէշ, եթ, ունի նաև ուրիշ խել մը տեսակ որսական կենդանիներ, և առատ ձուկ . նոյնպէս վընասակար կենդանիներ և զեռունները

հոն հասարակ բաներ են . աս բանիս պատճառ կու տան երկրաբաններն ու աշխարհագէտները իր բարեխառն կլիման ու ընտիր օդը՝ որ ինչուան նարնջենիները ձմեռը առանց ջերմանոցի բաց օդուն մէջ կը թողուն : Իսոնցմէ զատունի նաև ազնիւ մետաղներու և քարերու հանքեր : Իս պատճառաւ ինչ որ երկիրը կը բերէ, թէ մարդկային հնարքով և թէ բնութեն ուժովը, ամէնքն ալ գերազանց են Ալլինոյին ըսածին պէս . անոր համար զարմանք չէ որ այս կղզիս հին մատենագիրները այնչափ գոված ըլլան :

Իս պատճառաւ Ատրաբոն մեծամեծ գովեստներ կու տայ այս կը զւոյն վրայօք . " Օ ինչ և զհռչակելոյն ամենայն ուրեք զիկիլեայ զօրութեցն ասացից . ողք ովնչ իւիք քան զայլ մասունս Խտալիոյ 'ի վայր զնա զնեն . նա մանաւանդ վեհագոյն զնա ասասցես 'ի ցորեան, 'ի մեղր, 'ի քըքում, և յայլ բազում : Հաւել զուղեացն մերձաւորութիւն . զի թէպէտ կղզի, այլ մասն Խտալիոյ համարի, մանաւանդ չոռվմայ . զօրոյ զպէտս իրեւ զանդաստանաց Խտալիոյ զիւրապատրաստ մատակարարէ . ոյլ վասն և համբարանոց չոռվմայ զիկիլիա կոչեցին . զի անզր առաքին որ ինչ յաշխարհի անդ գան յարդիւնս, բաց 'ի սակաւուց որ 'ի բնակչացն պէտս ծախին, և ոչ պտուղք միայն և միրգք, այլ և ոչխար, և օդի և բուրդ և այլք նմանօրինակք . . . "

Աիկիլիան ուրիշ կողմանէ նշանաւոր է նաև իր մէջի եղած կարգէ դուրս բընութեան հրաշալիքներուն համար, որոնք գրեթէ անհաւատալի կ'երեան մարդուս . իր Խտնա լերանը հրաբուխին համար որ մէկ կողմանէ միշտ կրրակ կը հանէ, մէկալ կողմանէ մի և նոյն գագաթը ուսկից որ աւելի կրակ կ'ելլայ՝ մշտատե ձիւներով ծածկուած է, թէ ձմեռ ըլլայ և թէ ամառ, որով զարմանալի կերպով կը տեսնուի երկու հակառակ տարեբքներուն ուժը : Իցրինթի քաղքին մօտերը երկիր մը կայ, որն որ ինչուան այս օրս հին անուամբ

Վախարուքա կը կոչուի , ուր զանազան ջրի աղբիւրներէ մօխրի գունով շաղախ մը վեր կը նետուի . երբեմն երբեմն ալ անհաւատալի խոշորութեամբ շաղախի կտորներ կը նետէ երկրաշարժի որումունքով : Վենէս նահանգին մէջն ալ անուանի է Փալիցի ըսուած լիճը զրին որ Պլինիոս ալ կը յիշէ Աֆինթիա անուամբ , և հիմա Աէֆլա կ'ըսեն . ասիկայ երեք բերնով աղբիւրէ մը ամենատաք ջուր կը բղխէ , որ եռալու ատեն սաստիկ ձայներ կը հանէ և ամենագարշ հոտ մը ունի . երբեմն ալ տեսնուած է որ նոյն լճէն կրակի գնտակներ դուրս կ'ելլէն : Խատնա Երան ստորոտը մէկ աղբիւր մը կայ ուսկից պաղջուր կը հոսէ որ կ'եռայ և քայլախային համունի . ասոր մէջ թէ որ գիստորի գունով չուխայ ձգելու ըլլաս , մէկէն կը ուենայ : Վէկդի թողալ հիմա իր հրաբխային բլուրները , որոնք ինչուան դալար ծառերը կ'այրեն , ամենասողջ ջերմկային ու հանքային աղբերակունքը , և դարձեալ թունալից ու մնասակար աղբիւրները , լճացած և գարշահոտ ջրերը , Վկրականդի աղը որ ջրին մէջ կը լուծուի և կրակի մէջ կը ցատկրուտէ , և ուրիշ ասոնց նման անբաւընութեան երեսիթները , ու երկրաբանական սակաւագիւտ զարմանալիքները , խօսինք համառօտ մը նաև երկրին տարածութեանը , բնակչաց , թուոյն , գըլխաւոր քաղաքացը վրայ եւ :

Վիկիլիան իր քովի եղած մեծ ու պըզտիկ կղզիներովը 1360 աշխարհագրական քառակուսի մղոն տարածութիւն ունի . բնակիչը 2,300,000 կը համրուի որոնք բնութեամբ վասկուուն և եռանդնոտ են , արիասիրտ , ու յանդուգն և աւաղակաթարոյ , մտքով սրամիտ ու հանձարեղ , բայց միանգամայն ծոյլ և անհոգ մշակութեան ու երկիրնին ծաղկեցնելու կողմանէ , հաւատարիմ և անփոփոխ իրենց խոստմանցը մէջ . մէկ խօսքով՝ գետնին համեմատ իրենք ալ ուժով և զօրաւոր բնութեան տէր մարդիկ են : Վիկիլիոյ տարեկան մուտքն է 40,328,000 ֆռանք , իսկ եղած ծախքը

50,420,000 ֆռանք : Կրկերը ընդհանրապէս լեռնոտ է և ամենէն բարձրն է , Խատնա հրաբխային լեռը որ 10,500 ստուազափ բարձրութիւն ունի . ինչուան 6000 ստուազափ բարձրութեամբ անտառով ծածկուած է աս լեռս . իսկ անկէ վեր ապառաժ ու լաւայով և ծիւնով պատած . հրաբուխին բերանը երկու փարսախ տարածութիւն ունի . երկու հազար տարսւան ընթացքին մէջ ութունէն աւելի երկրաշարժ հանսած է , Վիկիլիոյ մէջ , ամէն անգամուն մեծամեծ մնանակ հասցնելով . 1693ին 41 քաղաք երկրաշարժէ կործանեցաւ , և 100,000 մարդ կորսուեցաւ : Խատնայէն զատ կայ նաև ուրիշ երկու հրաբուխ ալ Դիլճէնդի նահանգին մէջը որոնք Վագգալուպա և Վալաճերոյ կ'ըսուին . Վեղեցիկ են լեռանց մէջի եղած հովաններն ու բարեբեր ծորերը : Վարացիք որ ատեն մը աս կղզւոյս տիրեցին՝ զլիսաւոր հովիսներուն համեմատ իրեք մաս բաժնեցին . հովիտ Վացարա , Աղոյ , և Տեմնայ . իսկ հիմա եօթը գաւառ կը բաժնուի , որ են ասոնք իրենց բնակիչներովը

Բաշերմայ 480,280 . Մեսսինա 410,000 .  
Ճիրճէնդի 250,493 . Սիրտկուզա 280,167 .  
Դրաբանի 200,000 . Քաղանա 420,560 .  
Գաղգանիսէդդա 190,426 .

Խրաբանջիւր գաւառ իր համանուն քաղաքը ունի , որոնց բնակչաց թիւը ասոնք են . Վաղերմայ 180,000 , Ճիրճէնդի 17,000 , Վրաբանի 28,000 . աս գաւառիս մէջը կը գտնուի Վեգեստեայ աւերակները գուն մէջի գտնուած վեց աւերակ տաճարներէն մէկն է վերի գրուած պատկերը : Վեսսինա 166,000 . Վիրակուզա 18,000 . Վաղգանիսէդգա 16,000 . Քաղանիա 55,976 :

Վայրաբաղաքն է Փալերմոյ կմՊանուրման որ գեղեցիկ գիրքին և մէջի շէնքերուն համար անուանի է :

Վաղաքը կիսաբոլորակ գեղեցիկ ծոցի մը վրայ է . նաւահանգիստը թէպէտ և պղտիկ բայց ըստ բաւականին բանուկ է . Վիրետորեան հրապարակին մէջի եղած աղբիւրը գեղեցիկ է իր ամե-

նաձոիս զարդերուն համար որ մարդուն աշքը կը կշտայցնէ : Ուագաւորական պալատը շինուածքին կողմանէ թէպէտ շատ մեծ է , բայց համեմատութեան կողմանէ պակասաւոր . պալատին պաշտամութեանը համար երկու մարտկոց շինուած է , ուր որ մատուռ մը կայ 1129<sup>ին</sup> շինած արաբացի Ճարտարապետութեամբ և միւսիններով Ճոխ . պալատին ամենէն բարձր շէնքը քաղքին դիտարանն է որ 1791<sup>ին</sup> շինուեցաւ . 1801<sup>ին</sup> աս դիտարանէս զններով գտաւ Փիացցի հաջակաւոր աստղաբաշխը՝ Դեմետրէ մոլորակը : Երեւլի է Ալեքսարիա ըսուած պալատը որ դատաստանարան և բանտ է միանգամայն :

• Քանի մը պալատ խել մը եկեղեցին եր և մասնաւորապէս մայր եկեղեցին գեղեցիկ են մաւրիտանական Ճարտարապետութեան համար : Օ արմանալի բաներէն մէկն է վեղարաւոր կրօնաւորաց վանքին տակը եղած գետնագամբանները ժայռերու մէջ փորուած , ուր որ մեռեները խորչերու մէջ կը կեցնեն իրենց զգեստովն՝ ու հնա իրենք իրենցմէ չորնալով մումիա կ'ըլլան : Վեռելոյ օրը իւրաքանչւրին ազգականներն ու սիրելիները կ'երթան ու գեղեցիկ զգեստներով կը զարդարեն իրենց մեռեները :

Դաշտաւոր ուսումնական տեղերն են Համալսարանը , Հիսուսեանց դպրոցը , ուսմանց վարժարանը ( liceo ) , կղերիկոսաց դպրոցը , անկարանութեան պարտէզ , իրեք գրատուն հաստրակաց գործածութեան համար , մատենագրական և բժշկական երկու ընկերութիւններ , հսութեան և միտաներուն հաւաքման մէյմէկ թանգարաններ որոնց մէջ յարգի և դժուարագիւտ բաներ շատ կը գտնուին :

Կրօնական հանգէսներու մէջ խիստ նշանաւոր են սրբոյն Վճաթայի և Ուղղակիոյ տօնախմբութիւնները . առաջինը ծննդեամբ նոյն կղզիէն է . իսկ երկրորդին նշանալքները այլի մը մէջ զըստնուեցան 1624<sup>ին</sup> , որուն գտնուելովը քաղաքը ժանտամահէն ազատեցաւ . ասպատճառուաւ մէծ ջերմեռանդութեամբ

կը տօնաւի ասոր տօնախմբութիը տարուետարի Հյուլ . 1 հին . որ օդն որ թափարաբար նշխարքին ամենաչքեղ տապանը գտնուած քարայրէն կը հանեն , ու քաղաքը բերելով քաղքին գլխաւոր փողոց ներէն հանգիսով կ'անցնեն . աս հանդէսս օրերով կ'երթայ ու կղզիին բնակչաց չորսին մէկը ուխտի համար Փալերմոյ կուգայ , թէպէտ և տարին տասուերկու ամիս անպակաս են Փելեկիրինոյ գացող ջերմեռանդները ուր որ գտնուած է աս կոյսին նշխարքը : Վս հանգէսիս ամէն տարի միայն տէրութիւնը 60,000 տուգաթէն աւելի ծախք կ'ընէ :

Փալերմոյէն վերջը գլխաւոր քաղաքըն է Վեսսինա , որ նոյնպէս վաճառաշահէ է ու գեղեցիկագիր ծովածոցի մը վրայ կիսաբոլորակ ձեռով շինուած է . 1783<sup>ին</sup> սասսիկ երկրաշարժէ մը բոլորովին հիմնայատակ եղաւ՝ . բայց լաւ դիրքին ու վաճառաշահութեանը համար առջինէն աւելի աղէկ շինուեցաւ ու չիմա 100,000 և աւելի բնակիչ ունի . փալսցները լսյն ու կանոնաւոր են . տուները անզարդ ու վերէն՝ ի վար շիտակ ու միակերպ են երկրաշարժին պատճառաւ : Վառաւատնը վեց վանք կայ կրօնաւորաց և կուսանաց . վեց դպրոց ուրոնցմէ երկուքը ազնուականաց համար է . մէկ մ'ալ թագաւորական դպրոց և կղերիկոսարան մը՝ ուր որ 400 տղայ կայ . բայց հանգերձ այսու ամենայնիւ հասարակ ժողովրդեան մեծ մասը կարդալ չգիտեր : Վիշտենալու արժանի տեղեր ունի անոր համար ալ զանց կ'ընենք հոս յիշատակելը :

Պ . ռ .

1 Առ երկրաշարժին ստորագրութիւնը Տէս Բազմավագին Ա . տարին . երես 8 :

